Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

# ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

**Կիբերհանցագործություն@ԱԳ II՝ տարածաշրջանային և միջազգային համագործակցություն (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա)**

**Տարածաշրջանային ծրագիր**

## Ո՞ւմ համար է օգտակար

- իրավական հարցերով փոխադարձ օժանդակության մարմինների (Արդարադատության նախարարություն, դատախազություն)՝ ԱԳ վեց երկրներում:
- 24/7 տեղեկատու կենտրոնների՝ ԱԳ վեց երկրներում:

## Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար Ծրագրի նպատակները

- օպտիմալացնել կիբերհանցագործությունների և էլեկտրոնային փաստերի գծով տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը,
- կատարելագործել կիբերհանցագործությունների և էլեկտրոնային փաստերի գծով փոխադարձ իրավական օժանդակության մարմինների հմտությունները և միջազգային համագործակցության գործիքները՝ ԱԳ վեց երկրներում,
- ամրապնդել 24/7 տեղեկատու կենտրոնների դերը՝ ԱԳ վեց երկրներում,
- բարելավել և փոփոխել կիբերհանցագործությունների և էլեկտնրոնային փաստերի գծով փոխադարձ իրավական օժանդակության ընթացակարգերը և կանոնները՝ ԱԳ վեց երկրներում:

## Ինչպե՞ս է աշխատելու ծրագիրը

- փոխադարձ իրավական օժանդակության հարցերով աշխատանքային խմբերի միջոցով (Արդարադատության նախարարության և դատախազության ներկայացուցիչների՝ ԱԳ վեց երկրներում),
- 24/7 տեղեկատու կենտրոնների հարցերով աշխատանքային խմբի

## Ծրագրային գործողությունները

- 3 տարածաշրջանային հանդիպումներ Փոխադարձ իրավական օժանդակության հարցերով աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ,
- 3 տարածաշրջանային հանդիպումներ 24/7 տեղեկատու կենտրոնների աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ,
- կիբերհանցագործությունների և էլեկտրոնային փաստերի գծով փոխադարձ իրավական օժանդակության մասին ընթացակարգերը և

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

**Կիբերհանցագործություն@ԱԳ II՝ տարածաշրջանային և միջազգային համագործակցություն (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա)**

**Տարածաշրջանային ծրագիր**

միջոցով,
- միջազգային գործընկերների միջոցով՝ Էստոնիա, Ֆրանսիա, Գերմանիա, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն, Պորտուգալիա, Ռումինիա, ԱՄՆ, Եվրոպոլ, Եվրոջասթ:

կանոնները փոփոխելու և բարելավելու հանձնարարականների մշակում Գնահատման զեկույցի ձևով,
- հանձնարարականների իրականացում երկրներին ներհատուկ հանդիպումների, վերապատրաստումների միջոցով, ընթացակարգերի և քրեական օրենսդրության փոփոխում (անհրաժեշտության դեպքում),
- կիբերհանցագործությունների գծով միջազգային համագործակցության պլատֆորմի հիմնում,
- կիբերհանցագործությունների գծով միջազգային համագործակցության առցանց տեղեկատվական ռեսուրսի մշակում:

## Ի՞նչ կարժենա

- Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 800 000 եվրո:

## Ծրագրի տևողությունը

- Ծրագիրը կընթանա 2015 թ. մայիսի 1-ից մինչև 2017 թ. հոկտեմբերի 31-ը:
- Ծրագիրը մեկնարկել է 2015 թ. սեպտեմբերի 9-11-ին՝ Ռումինիայի Բուխարեստ քաղաքում:

## Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար

- Ծրագիրը իրականացվում է Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների ծրագրի գրասենյակի կողմից (C-PROC):

## Լրացուցիչ տեղեկությունների համար

- Գիորգի Ջոխաձե, Ծրագրի ղեկավար, giorgi.jokhadze@coe.int

**http://eap-pcf-eu.coe.int**

**Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար**

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

**Կիբերհանցագործություն@ԱԳ II` տարածաշրջանային և միջազգային համագործակցություն (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա)**

**Տարածաշրջանային ծրագիր**

2014 թվականի ապրիլի 1-ին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնեցին, որ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների` Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ նպատակաուղղված համագործակցային աշխատանքներ կտարվեն «Ծրագրային համագործակցության շրջանակ»-ի (ԾՀՇ) սահմաններում:

Այս համագործակցային աշխատանքների միջոցով կբարելավվեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները ներպետական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, որոնք, բացառությամբ Բելառուսի, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, մերձեցնելով դրանք եվրոպական չափանիշներին մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության ոլորտներում :

ԾՀՇ ընդհանուր բյուջեն 2015-2017 թվականների համար կազմում է 33.8 միլիոն եվրո:

**http://eap-pcf-eu.coe.int**